Հավելված N3
Շրջակա միջավայրի նախարարի 2020 թ.
մարտի ___-ի N___-Լ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) միջազգային համագործակցության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Վարչությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության հիման վրա:
3. Վարչությունի իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում իրականացնում է Նախարարության խնդիրներից, իրավասությունը սահմանող իրավական ակտերից բխող, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունն ապահովող գործառույթներ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչությունն իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում ապահովում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքով, այլ օրենքներով, Նախարարության կանոնադրությամբ Նախարարությանը վերապահված շրջակա միջավայրի ոլորտում Նախարարության միջազգային համագործակցության քաղաքականության մշակումը և իրականացումը:

III.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչությունն իր խնդիրների կենսագործման նպատակով իր լիազորությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) ապահովում է Նախարարության մասնակցությունը բնապահպանական բազմակողմանի միջազգային համաձայնագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներին/նախաձեռնություններին, ինչպես նաև ոլորտի միջազգային /գլոբալ և տարածաշրջանային/ գործընթացներին,

2) կազմակերպում է բնապահպանական բազմակողմ միջազգային համաձայնագրերից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման աշխատանքային ծրագրերի մշակման գործընթացը և մասնակցում է իրականացմանը, մասնակցություն շրջակա միջավայրի ոլորտում միջազգային քաղաքականության ուղղությունների և գործընթացների իրականացմանը,

3) մասնակցում է շրջակա միջավայրի ոլորտի միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի, /այդ թվում՝ բազմակողմ/ շրջանակներում համագործակցության ապահովմանը և օրենքով սահմանված կարգով, իր լիազորությունների շրջանակներում միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների և դրանց կատարմանն ուղղված աշխատանքների իրականացմանը,

4) ապահովում է շրջակա միջավայրի ոլորտում միջազգային ծրագրերի նախագծերի մշակման ու նախարարություն ներկայացված միջազգային ծրագրերի նախագծերի ուսումնասիրման և դրանց վերաբերյալ կարծիքի տրամադրման գործընթացը,

5) ապահովում է օտարերկրյա պետությունների, գլոբալ և տարածաշրջանային կազմակերպությունների հետ շրջակա միջավայրի ոլորտում համագործակցությունը,

6) մասնակցում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ֆինանսական օժանդակությամբ իրականացվող բնապահպանական ծրագրերի համակարգմանը,

7) Վարչության իրավասությունների շրջանակներում սահմանված կարգով ապահովում է Նախարարության ներկայացուցիչների արտասահմանյան գործուղումների կազմակերպման և ապահովման հետ կապված աշխատանքները,

8) Օտարերկրյա քաղաքականության ուղղությունների հետ կապված ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ սահմանված կարգով համագործակցության ապահովում,

9) համակարգում է բազմակողմ և երկկողմ միջազգային պայմանագերի, համաձայնագրերի և հուշագրերի նախագծերի մշակումը, ապահովում է դրանց ստորագրման և վավերացման հետ կապված գործընթացը.

10) մասնակցում է բնապահպանության ոլորտի երկկողմ միջազգային պայմանագրերի իրականացման աշխատանքներին,

11) միջազգային բազմակողմ և երկկողմ պայմանագրերից ու համաձայնագրերից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ համապատասխան մարմիններից ստացված անհրաժեշտ տեղեկատվության և հաշվետվությունների հիման վրա կազմում է ամփոփագրեր, ապահովում է սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացումը Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն և այլ պետական մարմիններ,

12) իրականացնում է շրջակա միջավայրի ոլորտի միջազգային համաձայնագրերի, կառույցների, գործընթացների, ինչպես նաև իրականացվող և նախատեսվող միջազգային ծրագրերի/ազգային և տարածաշրջանային/ վերաբերյալ տվյալների բանկի ստեղծման և վարման աշխատանքները, ինչպես նաև, ըստ պահանջի, համապատասխան տեղեկատվության տրամադրումը,

13) սահմանված կարգով կազմակերպում և իրականացնում է Նախարարությունում օտարերկրյա պետությունների, դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների պատվիրակությունների ընդունելությունը, և համապատասխան տեղեկատվության ներակայցումը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն,

14) մասնակցում է խորհրդակցությունների, գիտաժողովների, սեմինարների, վերապատրաստման դասընթացների և այլ միջոցառումների կազմակերպման և իրականացման աշխատանքներին,

15) սահմանված կարգով իրականացնում է արտասահմանյան գործուղումների ձևակերպումը, ապահովում է դրանց հետ կապված հաղորդակցությունը միջազգային կառույցների, դիվանագիտական ներկայացուցչությունների, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ,

16) նախարարի, Նախարարի տեղակալների գործուղումների հետ կապված նախապատրաստում է անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ և սահմանված կարգով ներկայացնում այն Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն,

17) ապահովում է արտասահմանյան գործուղումների վերաբերյալ հաշվետվությունների հավաքագրումը և դրանց ներկայացումը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն,

18) սահմանված կարգով իրականացնում է արտասահմանյան գործուղումների վերաբերյալ հաշվետվությունների վերլուծությունը և դրանց քննարկումների կազմակեպումը,

19) ապահովում է օտարերկրյա պետությունների և միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական օժանդակությամբ իրականացվող բնապահպանական ծրագրերի (այսուհետ՝ միջազգային ծրագրեր) համակարգումը,

20) կազմակերպում է միջազգային ծրագրերի նախապատրաստման, բանակցային և իրականացման գործընթացները,

21) ապահովում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում միջազգային ծրագրերի մշակման և իրականացման գործընթացները, ըստ անհրաժեշտության տեղական և արտասահմանյան փորձագետների ներգրավման կազմակերպումը,

22) ապահովում է միջազգային բնապահպանական ծրագրերի մասով համապատասխան մարմիններից ստացված ծրագրերին վերաբերող տեղեկատվության, ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա սահմանված կարգով պատկան մարմիններ ներկայացվող հաշվետվությունների (ամփոփագրերի, զեկույցների և տեղեկանքների) կազմումը (նախապատրաստումը) և տրամադրումը,

23) կազմակերպում է բնապահպանական հիմնախնդիրների լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության և Նախարարության կողմից հաստատված ծրագրերի շրջանակներում գլոբալ և տարածաշրջանային միջազգային ֆինանսական կառույցների և կազմակերպությունների հետ համագործակցության,

միջազգային ֆինանսական աղբյուրների հայթայթման և համապատասխան ծրագրային հայտերի կազմման հետ կապված աշխատաքները,

24) իրականացնում է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) միջև կնքված համաձայնագրերով բնապահպանության ոլորտի (ծրագրերի) գծով միջոցառումների (գործողությունների) իրականացման, և այդ միջոցառումների (գործողությունների) մասով պատկան կառույցների հետ տարվող աշխատանքների համակարգումը,

25) ապահովում է Թվինինգ, Թայեքս և այլ գործիքների ներքո ծրագրային առաջարկների ու հայտերի մշակումը, նախարարության ստորաբաժանումներին օժանդակումը և սահմանված որակի չափանիշներին՝ դրանց գծով ներկայացված փաստաթղթերի, համապատասխանության ստուգումը, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ներկայացումը,

26) ապահովում է միջազգային համագործակցության ոլորտում գործարար և ներդրումային միջավայրի բարելավման և զարգացման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների մշակումը,

27) ապահովում է նախարարություն ներկայացված միջազգային ծրագրերի նախագծերի ուսումնասիրումը և դրանց վերաբերյալ կարծիքի տրամադրումը,

28) կազմակերպում է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կառավարման, գնահատման և վերահսկողության գործընթացներ,

29) կազմակերպում է օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մշակմանը/լրամշակմանը, բնապահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարման ապահովման գործընթացներին՝ շրջակա միջավայրի պահպանության, ինչպես նաև կլիմայի փոփոխության ոլորտում.

30) կազմակերպում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջազգային ծրագրերի կատարման ընթացքի մոնիտորինգը և արդյունքների գնահատումը,

31) մասնակցում է Նախարարությունում միջազգային համագործակցության ուղղությամբ տարվող աշխատանքների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակմանը,

32) մասնակցում է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի՝ շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների և կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի մշակման գործընթացին՝ միջազգային համագործակցության մասով,

33) մասնակցում է քաղաքացիների առաջարկությունների, դիմումների, բողոքների սահմանված կարգով քննարկմանը և պատասխանների տրամադրման գործընթացին,

34) կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի, կոմիտեների և նախանիստերի օրակարգերում ընդգրկված հարցերը և ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ կազմում տեղեկանքներ, ելույթներ,

35) մասնակցում է Նախարարության գործունեության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմման գործընթացին,

36) իրականացնում է Վարչության աշխատանքային ծրագրերի ու Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմում,

37) ապահովում է Նախարարի, իսկ օրենքով սահմանված դեպքերում և իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում՝ նաև նախարարի տեղակալների և Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարականների կատարումը,

38) իրականացնում է իրավական այլ ակտերով Վարչությանը վերապահված գործառույթներ:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

6. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը:

7. Վարչության պետն անմիջական հաշվետու է շրջակա միջավայրի նախարարին (այսուհետ՝ Նախարար):

8. Նախարարի հրամանով վարչության գործունեության համակարգումը կարող է վերապահվել Նախարարին կամ Նախարարի տեղակալներից մեկին :

9. Վարչության պետի տեղակալը, վարչության պետի համապատասխան հանձնարարականի դեպքում, համակարգում է վարչության գործունեությունը կամ աշխատանքներն իրեն հանձնարարված բնագավառներում:

10. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության պետի տեղակալը, իսկ վարչության պետի տեղակալի բացակայության դեպքում՝ պաշտոնների դասակարգման համակարգում առավել բարձր խմբի կամ ենթախմբի պաշտոն զբաղեցնող վարչության այլ աշխատողը, ում պաշտոնի անձնագրով նախատեսված է վարչության պետին փոխարինելու իրավասություն, իսկ այս պայմանների հավասարության դեպքում՝ քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ ունեցող քաղաքացիական ծառայողը, եթե վարչության պետին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի անհատական իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

11. Վարչության պետի, վարչության պետի տեղակալների, վարչության այլ աշխատողների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը, նրանց գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներն ու կոմպետենցիաները, կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում են քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոնների անձնագրերով: